Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3(07)
Ք-16

Լ. Կ. ՅԵ. Մ. ԼԵՆԳԱՎԿՈՄ

# ՔԱՂԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ
# ԾՐԱԳԻՐ

300
2663-ԾՐ

Պետհրատի IV տպարան Լենինականում 1925 թ.

Գրառեպվար 62 Պատ. № 520 Տիրաժ 100

18 SEP 2013
11601
3(07) / Ք-6
Կց
300 / Չ663-ԾԸ
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ · С.С.Р.А. Публичная Библиотека · 7/XI. 1922 · имени А. Мясникяна · Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1 DEC 2009
25 SEP 2006
1003 / 1880

# ՔԱՂԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## 1. ՄԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏ. ՄԻՈՒԹՅՈՒՆ Է։

*Լենինը և նրա ավանդներն ինչ են սովորեցնում։ Լենինը յերիտասարդությանը։*

*Ինչու վերանվանվեց մեր միությունը Լենինյան։ Գյուղական կոմյերիտականները ըստ Իլիչի ավանդների։*

## 2. ԿՈՄՅԵՐԻՏ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*Ու՞մ են ընդունում միության մեջ (շեշտել կազմակերպության դասակարգային բնույթը)։ Կոմյերիտականների պարտականությունները (կապել վորոշ չափով ծրագրի հետ)։ Կոմյերիտական դիսցիպլինան։ Բջիջից մինչև կենտ-կոմ.։ Ինքնագործունեությունը կոմունիստական դաստիարակության հիմքն է։*

## 3. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

*Կոմյերիտմիությունը մասսայական կազմակերպություն է։*

*1. Կոմյերիտմիությունը կուսակցության ոգնականն է գյուղում։*

2. Ինչպես է կուսբջիջը ղեկավարում կոմյերիտական բջիջին։

3. Կոմյերիտմիության բջիջի աշխատանքները այնտեղ, ուր չկա կուսբջիջ։

4. Կոմյերիտմիության բանվորա-գյուղացիական կազմը և նրա պրոլետարական էությունը՝ պրոլետարական ղեկավարությունը։

5. Ոչ թե փոխարինել գյուղխորհուրդին, այլ օգնել նրան կանոնավորելու իր գործերը։ Գյուղխորհրդի անդամ կոմյերիտի աշխատանքը։ Ինչպես է ղեկավարում բջիջը նրանց աշխատանքը, կոմյերիտականների մասնակցությունը գյուղի հասարակական ժողովներին։ Աշխատանքը գյուղխորհրդի հանձնաժողովներում։

Դպրոցին օգնելու ձևերը (վառելիք, լուսավորություն և այլն)։ Գյուղական մասսաներին, գյուղխորհրդի, դատարանի և այլ մարմինների վորոշումների պարզաբանումը։ Զանազան կամպանիաների մասնակցելը։ Կոմյերիտականներին և անկուսակցական յերիտասարդությանը կոոպերացիայի մեջ քաշելը։ Կոմյերիտականների աշխատանքը կոոպերատիվ-վարչություններում։ Կոմյերիտմիության աշխատանքները փոխօգնկոմներում։ Գյուղի բարեկարգումը և կոմյերիտմիությունը (կամուրջների, ճանապարհների, աղբյուրների կանոնավորումն և այլն)։

6. Կոմյերիտմիությունը և խրճիթ-ընթերցարանները։ Կոմյերիտմիությունը և կորչի անգրագիտության ընկերությունը։

## 4. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Կոմյերիտականները կապիտալի յերկրներում։ Ինչպես են նրանց հալածում։ Ինչպես են նրանք գոր-



ծում։ Արևելքի և ճնշված ժողովուրդների յերիտասարդությունը։ Յերիտ-Կոմինտերնը ղեկավարն է միջազգային յերիտշարժման։ Կոմյերիտականը Յերիտկոմինտերնի անդամն է։

## 5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի դիրքը, սահմանները։ Հայաստանը վորպես գյուղատնտեսական յերկիր։ Գյուղատնտեսական վոր ճյուղերը տեղ ունեն Հայաստանում։ Վորքան նպաստավոր է Հայաստանի հողը այդ ճյուղերի զարգացմանը։ Անասնապահության վիճակը Հայաստանում դաշնակցականների և Խորհ. իշխանության օրով։ Հայաստանի հացաբույսերի ցանքերը։ Ցանքերի տարածության լայնացումը Խորհ. իշխանության օրով։ Գյուղատնտեսական մեքենաների օգտագործումը։ Գյուղատնտեսությունից ստացած մեր յեկամուտը։ Հայաստանի անտեսության վիճակը և հեռանկարները։

## 6. ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՎ

Ցարական կառավարության էությունը։ Գյուղացիների և բանվորների դրությունը նրա օրով։ Ինչպես և ում միջոցով եր ցարը շահագործում (ցարական պաշտոնյաները, բանակը և այլն)։

Ցարի կառավարության կողմից տարվող պատերազմները։ Ինչու եր նա պատերազմում, և ով եր տուժում։ Բանվորների և գյուղացիների պայքարն ընդդեմ ցարիզմի։

## 7. ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԵՅՎ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ

*Բանվոր դասակարգի կուսակցությունը—բոլշևիկները և այդ կուս. պարագլուխ Լենինը։ Լենինը բանվորների և գյուղացիների միասնական պայքարի կողմնակից։ Ցարական պատերազմը միացնում և բանվորներին և գյուղացիներին։ Հոկտեմբերյան Հեղափոխությունը քաղաքում և գյուղում։ Կռիվ գեներալների, կալվածատերերի և օտարերկրյա կապիտալիստների դեմ։*

## 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՎ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

*Դաշնակցական կուսակցությունը։ Գյուղացիների դրությունը դաշնակցականների օրով։ Ազգային կռիվները և գյուղացության քայքայումը։ Դաշնակցականները և «Անկախ Հայաստան»-ը։*

*Անկման եր արդյոք դաշնակցականների կառավարությունը։ Յերբ և ինչպես կատարվեց Հայաստանի Խորհրդայնացումը։ Փոխհարաբերությունը հարեվան հանրապետությունների հետ։ Գյուղացության դրությունը ներկայումս։*

## 9. ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Արդյունաբերության և գյուղատնտեսության բարձրացման խնդրում բանվորների և գյուղացիների փոխադարձ շահագրգռված լինելը։ Վերջին տարիների*



*ընթացքում գյուղատնտեսության ասպարեզում կատարված նվաճումները։ Խորհրդային իշխանության ոգնությունն և ցույց տալիս գյուղատնտեսությանը։ Գյուղատնտեսության վերականգնումը անբերրիությունից վնասված շրջաններում, փոխարինարար տարվող սերմնացանը։ Հողաշինարարական ձեռնարկները։ Հացահատիկների առևտուրը արտասահմանի հետ։ Կուսակցության XIV-րդ կոնֆերանսը գյուղացիական գործերի մասին։*

## 10. ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(շարունակություն)

*Ինչպես և վերականգնում խոշոր արդյունաբերությունը։ Ի՞նչ հաջողություններ ենք ունեցել վերջին տարիների ընթացքում տրանսպորտի ասպարեզում։ Մեր հաջողությունները նավթի, քարածուխի, մետաղագործության և մանվածքային արդյունաբերության ասպարեզում։ Կայուն դրամ, նրա նշանակությունը, գների իջեցումը։ Հայաստանի արդյունաբերությունը։ Պետության յեկամուտները և ծախսերը։ Պայքար գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ միջնորդի դեր խաղացող մասնավոր առևտրականի դեմ։*

## 11. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐԻ ՊԱՀԱԿԸ (ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ)

*(Կոնսպեկտ-համաձայն գրքի)։*

## 12. ՅԵՐԿՐԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ ՅԵՎ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

*(Կոնսպեկտ համաձայն գրքի)*

## 13. Ո՞Վ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Խորհրդային իշխանությունը բանվորների և գյուղացիների իշխանությունն է։ Խորհուրդներում ընտրելու և ընտրվելու ովքեր իրավունք ունեն։ Գյուղական խորհուրդը և շրջգործկոմը (շրջանների խոշորացում)։*

*Խորհ. իշխանության բարձրագույն օրգանները։ Նրանց կառուցվածքը Ս.Խ.Հ.Մ. Խորհրդային Հանրապետությունները միություն է։ Ռիկով և Կալինին։ Ս. Համբարձումյան և Կարինյան։ Խորհրդային ապարատի թերությունները և նրանց դեմ մղվող պայքարը։ Խորհուրդների աշխուժացումը։ Տեղական բյուջեն։ Գյուղացիական ակտիվը։*

## 14. ՄԵՐ ԳՅՈՒՂԸ

*Ցեցերը (կուլակները), միջակները, աղքատները և մշակները (բատրակները) գյուղում։ Ինչպես պետք է կռվել ցեցերի ճնշման դեմ։ Հողանստատի միություն, և փոխադարձ օգնության կոմիտեներ։*

## 15. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

*Կոոպերացիայի նշանակությունը բատրակների և գյուղացիների մերձեցման խնդրում։ Մասնավոր առևտրի դեմ պետք է կռվել սպառողական կոոպերացիայի միջոցով։ Կոոպերատիվ ընկերությունների տարբեր տեսակները։ Մեքենաներ հայթայթող ընկերություն։ Գյուղատնտեսական կոոպերացիա, վարկային ընկերություններ։ Տնայնագործական ընկերություն։ Կոմյերիտականները կոոպերացիայի ասպարեզում։*



## 16. ՀՈՂԱՇԻՆԱՐՈՒԹՅՈՒՆ

*Ո՞ւմն է պատկանում հողը։ Ինչպես էր բաշխված հողը առաջ և ինչպես է հիմա։ Ինչ իրավունքներ ունի հողն օգտագործողը։ Հողաշինարարության մեջ անտառի հարցը։ Հողագործման տարբեր ձևերը։ Վո՞րն է հողաշինարարության լավագույն ձևը։*

## 17. ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Ի՞նչ բան է կուսակցությունը։ Քանի կուսակցություն ունի պրոլետարիատը։ Վո՞ր դասակարգի կուսակցությունն է Կոմունիստական կուսակցությունը։ Բանվորա-գյուղացիական և թե բանվորական մեր կուսակցությունը։ Կոմ-կուսը վորպես գյուղի մեծամասնության շահերը պաշտպանող միակ կուսակցությունն է։ Ե՞րբ է հիմնվել մեր կուսակցությունը։ Ինչպես էր կոչվում այն ժամանակ կուսակցությունը։ Ե՞րբ նա բաժանվեց յերկու մասի (ինչ մասերի)։ Վո՞րոնք էյին այն գլխավոր պատճառները, վորոնք բաժանման հիմք ծառայեցին։ 1905 թվի հեղափոխության գլխավոր ուժերը։*

*Բոլշևիկների և մենշևիկների տեսակետները այդ հեղափոխության մասին։ Հեղափոխության պարտությունը և պարտության պատճառները։ Կուսակցությունը ռեակցիայի շրջանում։*

*1917 թ. Փետրվարը և Հոկտեմբերը։ Բոլշևիկների դերը այդ յերկու հեղափոխության ընթացքում։ Կուսակցությունը և ՆԷՊ-ի անցնելը։ Լենինի մահը։ Լենինյան կոչը։*

## 18. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Յերեք սերունդ. Ինչպես կառուցել կոմմունիզմը: Կոմկուսը բանվոր դասակարգի առաջավոր գունդ: Ո՞ւմ են ընդգրկում Կոմկուսը, Կոմյերիտմիությունը և Պիոներ կազմակերպությունը: Կուսակցության, Կոմյերիտմիության և Պիոներական շարժման տարբերությունը: Կոմյերիտականը պատրաստվում է Կուսակցության, իսկ պիոները կոմյերիտմիության համար: Ինչպես է կազմված կուսակցությունը, կոմսոմոլը և պիոներական կազմակերպությունը: Պիոներական կազմակերպությունը: Կոմյերիտմիությունը ղեկավարն է պիոներական շարժման: Պիոներական փորպոստները: Ինչպես է կազմված կոմյերիտմիությունը: Ինչպես է կուսակցությունը ղեկավարում կոմյերիտմիությանը: Ինչպես է կառուցված Ռ. Կ. Կ. կուսակցության, կոմյերիտմիության և պիոներների կապը: Հին և Նոր գվարդիան:*

## 19. ԿՈՄԻՆՏԵՐՆ

*Համաշխարհային պատերազմը: 2-րդ Ինտերնացիոնալի դիրքը Ցիմերվալդ, Կենտալ, 1919 թվի Կոմինտերնի կազմակերպումը: Բանվորների և գյուղացիների վիճակը կապիտալի յերկրներում: Ինչպես են պաշտպանում կապիտալիստները իրենց իշխանությունը: Կոմինտերնը և Կոմկուսակցությունները զանազան յերկրներում: Բանվորների և գյուղացիների մերձեցումը:*

Ս.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922



ՀՀ Ազգային գրադարան
NL0195692